ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 137-Ա
06 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021Թ

ԼԻԱՆԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N224-Ն որոշման N1 հավելվածի 14-րդ կետով, ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2021 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման ընթացակարգ և մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 78-Ա որոշման N1 հավելվածի 89-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) 2021 թվականի սեպտեմբերի 3-ի մրցութային հանձնաժողովի N3 որոշումը և Լիանա Ջոհրաբյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021թվականի սեպտեմբերի 7-ից Լիանա Ջոհրաբյանին նշանակել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ 1 /մեկ/ տարի ժամկետով, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր:

2. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի ու ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություններին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել հանձնման-ընդունման աշխատանքները՝ համաձայն հավելվածի:

9/6/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2021թ սեպտեմբերի 6-ի
N137-Ա որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝	
Հարությունյան Հուսիկ	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
Անդամներ՝	
Մաղաքյան Նարինե	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
Սաֆարյան Աննա	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր տնտեսագետ